

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

PHILOLOGY

ФИЛОЛОГИЯ

ԷԼՅԱ ՀՐ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

DOI:10.57155/GAAX7186

«ՔԱՐՈՉ»-Ը ԵՎ ԱՌԱՋԱԿԱՆ ՈՐՈՇ ԲԱՌԵՐ

Բանալի բառեր՝ Քարոզ, քարոզակ, գաղափար, բառի ծագումը, ճառ, խրատ, գանձ, ծիսամատյան, «Կանոնագիրք Հայոց», բարամուտք, աւետաքարոզ:

Կանխաբանություն

Ցանկացած լեզվում, կախված արտաքին հանգամանքներից և ժամանակի հրամայականից, բառերի նշանակությունը երբեմն ընդլայնվում է, երբեմն էլ ընդհակառակը՝ նեղանում է: Գրավոր հուշարձաններն ուսումնասիրելիս շատ կարևոր է տեքստը ճիշտ ըմբռնելու համար դիտարկել բառիմաստի յուրաքանչյուր նրբերանգր:

Հոդվածը ներկայացնելիս նպատակ ենք ունեցել լուծել հետևյալ խնդիրները.

ա. անդրադառնալ «քարոզ» բառի դարերի ընթացքում կրած իմաստային փոփոխություններին, ցույց տալ անտիկ շրջանից մինչև մեր օրերը «քարոզ» բառի կիրառության տարբեր ոլորտները,

բ. ներկայացնել ծագումնաբանությունը՝ մեջբերելով տարբեր ուսումնասիրողների տեսակետներ,

գ. ընդգծել հայ մատենագրության մեջ դրա կիրառումը և ընկալումը՝ դրանք լուսաբանելով միջնադարյան մատենագրական երկերից մեջբերվող օրինակներով (և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն),

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, պ. գ. թ., elyasaribekyan7@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 մայիսի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 4 հունիսի, 2025:

դ. բացահայտել քարոզի՝ որպես մատենագրական տեսակի առանձնահատկությունները՝ մատենագրական այլ միավորների (ճառ, խրատ, գանձ) համեմատությամբ,

ե. շեշտադրել միջնադարյան եկեղեցական ծիսամատյաններում «քարոզ» բառի տարանշանակ գործածությունը. մի դեպքում այն սարկավագի հնչեցրած աղոթք-մաղթանք է, մյուս դեպքում՝ Սբ Պատարագի խորհրդի ժամանակ բեմից արտասանվող քարոզխոսություն,

զ. ակնառու դարձնել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում «քարոզ» բառի տարբեր նշանակությունների շարքում հանդիպող ևս մեկ իմաստ, այն է՝ «առաջնորդ»,

է. լուսաբանել «քարոզակ» բառի տարիմաստ ընկալումները մատենագրական օրինակների միջոցով,

ը. մասնակի խոսել «քարոզակ»-ի՝ որպես իրանիշ գոյականի հոմանիշների մասին՝ «գաւազան», «վարոց», «բարսմունք» և այլն,

թ. մեզ հասանելի մատենագրական ժառանգությունից դուրս բերել «քարոզ» արմատով կազմված մի շարք բառեր՝ ընդձելով մեր լեզվի բառակազմական ճկունությունը և բառաստեղծման լայն հնարավորությունները, որոնք յուրահատուկ ճոխություն են տալիս թե՛ շարականներին, թե՛ հիշատակարաններին, թե՛ մեկնողական գրականությունը:

«Քարոզ» բառի իմաստները, ծագումնաբանությունը

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը «քարոզ» բառը բացատրում է մի քանի իմաստով. «Կարդացող ի ձայն բարձր հրապարակաւ, ձայնատու, ազդարար, պատժիչ պատգամաց և հրամանաց Աստուծոյ, թագաւորի, զօրավարի, քաղաքապետի, մունետիկ: Երաժիշտ, նուագածու, փողար: Բան սարկաւագի ի ժամասացութեան իբր ազդարարողի: Ներբողեան, գանձ տօնից, երգ: Վարդապետութիւն, յատնաբանիչ, բացատրութիւն»¹: Նախ՝ քարոզ-ը անձ է: Նա հրապարակավ, բարձր ձայնով կարդացող, հայտարարող մարդն է, մունետիկը, որն ազդարարում է թագավորի, զորավարի հրամանները: Ե դարի մատենագիր Եզնիկ Կողբացու երկի ներքոբերյալ հատվածներում «քարոզ»-ը գործածվել է

¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբաճօր Հ. Գաբրիէի Աւետիբեան, Հ. Խաչատրոյ Սիրմէեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 999:

«քարոզիչ» իմաստով. «Այլ նախ կրթեաց քարոզովքն և մարգարէիւք....»² (այս և հետագա ընդգծումները մերն են), կամ՝ «....արձակեալ քարոզս բազումս՝ քարոզել»³: Մեկ այլ դեպքում «քարոզ»-ը երաժիշտն է, նվագածուն, փողհարը: Հետագայում բառն իմաստային փոփոխության է ենթարկվել՝ անձնանիշ գոյականից դառնալով իրանիշ գոյական: Այն դառնում է եկեղեցական ծեսի անբաժան մաս, ձեռք բերում այն իմաստը, որով, մեծավ մասամբ, գործածվում է այսօր, այսինքն՝ քարոզ՝ եկեղեցու բեմից ժողովրդին ուղղված հոգևորականի խոսք: «Քարոզ»-ը միջնադարում ձևավորվում է որպես հոգևոր-գրական առանձին տեսակ, որն ունեցել է կուռ կառուցվածք: Միևնույն ժամանակ, ծիսամատյաններում կարելի է հանդիպել նաև «քարոզ» բառի այլիմաստ գործածումների՝ աղոթք-մաղթանք:

Ըստ Հր. Աճառյանի⁴ և Հ. Հյուբշմանի⁵ «քարոզ»-ը ծագում է ասորերեն *kārōzā* (մունեստիկ, սուրհանդակ) բառից: Նույն բառահոգվածում Հր. Աճառյանը հղում անելով Հյուբշմանին, կարծես թե համաձայնում է նրա մտքի հետ. «....որոնք իրենց կարգին թերևս փոխառեալ են յն. Կիրքս (մունեստիկ, քարոզ) և Կիրսոսեւ (քարոզել) բառերից»: Հունարեն ստուգաբանական բառարաններում Կիրքս *m. (herald, messenger/héraut, messenger)*, իսկ դորիական բարբառով *ὁ* (հազվադեպ անգամ իգական սեռի հոգով՝ *ή*) Կիրքս բառի դիմաց նշվում է միայն սանսկրիտ *kārū* (singer, poet) երաժիշտ, պոետ զուգահեռները⁶:

Պատմամշակութային տեսանկյունից հայ-ասորական հարաբերությունները սերտ փոխառնչություն ունեն, ուստի հայոց լեզվի բառային ֆոնդի վրա ազդեցությունն աներկբա է: Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի՝ եկեղեցական բառամթերքի որոշ բառեր ևս ասորական փոխառություն են, այդ թվում խնդրո առարկա «քարոզ» բառը⁷:

² Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, ՄՀ, հտ. Ա, Ե դար, էջ 494. Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, քարգմ. և ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994, գլ. ԺԶ, էջ 188:

³ Նույն տեղում, էջ 503. նույն տեղում, գլ. Թ, էջ 216:

⁴ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հտ. Դ, Երևան, 1971, էջ 563:

⁵ Հ. Հյուբշման, *Հայագիտական ուսումնասիրություններ*, գերմաներենից քարգմանեց Մ. Ն. Հարությունյանը, Երևան, 2004, էջ 160, 293, 409: Գալագան-ի մասին տե՛ս նույնի, էջ 88, 96, 103, 104, 171:

⁶ *Etymological Dictionary of Greek* by Robert Beekes, Brill, Leiden-Boston, 2010, 690. *Dictionnaire étimologique de la langue grecque, Histoire des mots* par Pierre Chantraine, Paris, Klincksieck, 1999, 527.

⁷ Тер-Петросян Л., *Армения и Христианская Сирия: культурные связи (IV-V вв.)*, Ереван, 2022, сс. 148, 458-459:

Հստ Հրաչ Մարտիրոսյանի՝ «հնարավոր է իրանական որևէ լեզվի միջնորդությունը ևս, ինչպես օրինակ մանիքեական պարթևերեն *kārūz* [q'rwC, q'rwz] (մունեսիկ) բառը⁸: Տեսականորեն՝ կարելի է նաև մտորել, որ «Քարոզ» բառը հայերենն ասորերենից փոխառել է իրանական որևէ լեզվի միջնորդությամբ: Բայց, այնուամենայնիվ, կարծում եմ, որ դրա կարիքը չկա, ու որ «Քարոզ» բառի կերպարանքն ավելի հարմար է հենց ասորական փոխառության համար: Ընդհանուր տպավորությամբ՝ ավելի հավանական է, որ «Քարոզ» բառն ուղղագծորեն ասորական փոխառություն է»⁹:

Արժևորելով բոլոր ուսումնասիրողների տեսակետները՝ չենք բացառում նաև, որ բառը հունարենից անցել է ասորերենին, որի միջոցով էլ՝ հայերենին, հատկապես որ «Քարոզ» արմատից -ակ վերջածանցով կազմված «Քարոզակ» բառը հունաբան թարգմանություններում առկա նորակազմություններից է¹⁰:

Քարոզի՝ որպես մատենագրական ժանրի ձևավորման և զարգացման պատմության ակունքները հասնում են մինչև անտիկ շրջան: Հստ Սերգեյ Ավերինցևի՝ «Քարոզ»-ը ստեղծվել է որպես «հեռտորական խոսքի ժանր, դիդակտիկ ստեղծագործություն, որը բովանդակում է բարոյական պահանջներ (սովորաբար կրոնական բնույթի)»¹¹: Նրա կարծիքով այն կյանքի է կոչվել Ք.ա. Թ-ն դարերում: Հետագայում՝ վաղ քրիստոնեական շրջանում, ժանրը զարգացում է ապրում՝ ձեռք բերելով նոր հատկանիշներ և «քրիստոնեացվում»՝ դառնալով եկեղեցական արարողությունների և հայրախոսական գրականության անբաժան և առանցքային մասը: Եկեղեցու պատմության անքակտելի բնագավառ է քարոզխոսությունը՝ ճառախոսությունը (հունարեն՝ ὁμιλία – «զրույց», «ճառ»)՝¹²:

Քարոզ մատենագրական տեսակի վերաբերյալ ուսումնասիրություններն առհասարակ հայ իրականության մեջ սակավաթիվ են¹³: Միայն քարոզխոսա-

⁸ Dictionary of Manichean Middle Persian and Parthian by **Desmond Durkin-Meisterernst**, Brepols, 2004, 203a.

⁹ Հրաչ Մարտիրոսյանի կարծիքն ինձ է փոխանցվել մամականագրությամբ:

¹⁰ **Գ. Ս. Ասատրյան, Գ. Ս. Մուրադյան**, «Գրաբարի -ակ անվանական վերջածանցը», *ՊԲՀ*, 1985, 3, էջ 140:

¹¹ **С. С. Аверинцев**, «Проповедь», *Литературный энциклопедический словарь*, Москва, 1987, с. 307.

¹² **Ф. Арх. Бильченко**, «Гомилетика», *Православная энциклопедия*, т. 12, Москва, 2011, стр. 23-39.

¹³ Մարիամ Վարդանյանը, մեջբերելով *ԻԲՀ*-ից «հարոզ» բառի բացատրությունը, քյուտիմացաբար սխալ է բացատրում ազգել բառի իմաստը: Այն ընկալում է ներազգել իմաստով, մինչդեռ գրաբարում ազգել-ը ազդարարել, հայտարարել, հրապարակել իմաստն ունի. տե՛ս **Վարդանյան Մ.**, «Քարոզը որպես միջնադարյան հրապարակախոսության հոգևոր արտահայտություն», *Էջմիածին*, 2000, Դ, էջ 89 (87-97):

կան ժանրի շրջանակում թեմային անդրադարձել են Բաբկեն Կյուլեսերյանը¹⁴, Գարեգին Հովսեփյանը¹⁵, իսկ Կարապետ Տեր-Մկրտչյանն¹⁶ իր հոդվածը կազմել է, ինչպես ինքն է նշում, իր ուսուցչի՝ Էռնստ Քրիստիան Ախելիսի «Գործնական աստուածաբանություն» դասախոսություններից¹⁷:

Քարոզ, քարոզակ, գալազան

Անտիկ շրջանում որպես «քարոզ» (հուն.՝ κηρύσσω) բառի հոմանիշներ գործածվել են ἄγγελος – ավետաբեր (Սոֆոկլեսի ողբերգություններում) և ἀπόστολος – լրաբեր, դեսպան (Հերակլիտոսի երկերում, նաև Հոմերոսի ու Հեսիոդոսի պոեմներում) բառերը¹⁸: Անտիկ հունարեն բնագրերում «քարոզ»-ը, այսինքն՝ ավետաբերը, մունեստիկը, դեսպանը, անձեռնմխելի անձ է և պաշտպանված է «միջազգային» իրավունքով և օրենքներով: Հռոմեական շրջանում խաղաղության ավետաբեր մունեստիկները տարբերվում էին պատերազմ հայտարարող մունեստիկներից: Ավետաբեր մունեստիկներն ունեին ձիթենուց պատրաստված գավազան, որը և «անձեռնմխելիություն» էր տալիս նրանց այլ երկրում¹⁹:

Հայերենում «քարոզ» արմատից ունենք «քարոզակ» բառը, որի կազմությունը հար և նման է հունարեն τὸ κηρύκειον բառի կազմությանը. «քարոզակ» բառի արմատը քարոզ-ն է, որին ավելացել է -ակ վերջածանցը: Հունարենում նույնպես κηρύκειον բառը կազմվել է κηρυκ- արմատից և -ειον վերջածանցից: Այդպես է կոչվել մունեստիկի գավազանը, որը լատիներենում հանդիպում ենք caduceus ձևով: Գավազանն ունեցել է երկու իրար փաթաթված օձերի տեսք:

¹⁴ Բաբկեն ծ. վրդ. Կիսելեհան, «Քարոզելու արուեստը», «Լոյս» շաբաթաթերթ, 1905 (Ժ տարի), 3, էջ 49-54: Տե՛ս նաև Գաբեգին Ա. Կաթողիկոս ամենայն հայոց, Աստուածաբանություն, Կրոնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր (հայերէն շարք, հտ. Գ), խմբ.՝ Վազգէն Դովասեան, Կանադա, 2005, էջ 277-283:

¹⁵ Գաբեգին վրդ. Յովսէփեան, Դեպի լոյս եւ կեանք, «Գանձասար» մատենաշար, Երևան, 1994, էջ 7-11: Տե՛ս նաև Գաբեգին Ա., Աստուածաբանություն, էջ 285-287:

¹⁶ Կարապետ Տեր-Մկրտչեան, «Քարոզի նշանակությունը եւ գործադրությունը եղանակը», Արարատ, 1895 (Ի՞նչ տարի), Բ, էջ 44-48:

¹⁷ Է. Ք. Ախելիսի դասախոսությունները տպագրվել են 1923 թվականին, իսկ 2012 թվականին վերահրատարակվել. տե՛ս Ernst Christian Achelis, *Praktische Theologie...*, Dutch edition, 2012:

¹⁸ *Greek-English Lexicon*, compiled by H. G. Liddell and R. Scott, Oxford, 1996, 949.

¹⁹ Գավազանի գործածության հետ կապված խնդիրներին առավել մանրամասն կանոնադրադրական առաջիկայում:

Նման տեսք ունեցող գավազաններից ամենահայտնին Հերմեսի²⁰ գավազանն է։ Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ այդպիսի գավազաններն ունեցել են բաբելոնյան նախօրինակ²¹, ինչը հավանական է, քանի որ այդ տարածքի հետ են առնչվում աշխարհաստեղծման հնագույն ավանդությունները։ Այս տարածաշրջանի հետ են կապվում նաև օձերի²² խորագիտության, խորամանկության, դրանց շար կամ բարի լինելու մասին տարբեր պատումներ։ Իսկ ահա գավազանի վրա փաթաթված երկու օձերը ոմանց կարծիքով խորհրդանշում են բարու և չարի դուալիստական սկզբունքները, ոմանց կարծիքով էլ՝ արական և իգական սկիզբը։ Գավազանը համարվել է հաշտության խորհրդանիշ։ Քարոզը (անձը), ունենալով այն իր ձեռքին, իրավասու է եղել խոսել թագավորի անունից։ Իսկ հետագայում գավազանը դարձել է դեսպանի անբաժանելի խորհրդանիշներից մեկը։

«Քարոզակ»-ը ՆԲՀՀ-ում բացատրվում է նախ «Քարոզիչ» իմաստով, այսինքն՝ գործող անձի անուն (nomen agentis) է²³ և ածանցյալ է ոչ թե «Քարոզ» գոյականից, այլ «Քարոզեմ» բայից. «Ոչ եթե անգէտ եմ ընկուզոյդ անուան՝ ըստ քարոզակին ստացեալ...»²⁴։

«Քարոզակ»-ն ունի նաև «Ահարոնի ընկուզաբեր գաւազան», «գաւազան պատգամախօսի» բացատրությունները. «Քարոզակաւ ընկուզին յայտնեն գատելիսն»²⁵։ Ակնհայտ է, որ Ահարոնի «ընկուզաբեր գավազան» բառակապակցությունը կապվում է աստվածաշնչյան բնագրի հետ (Թիւք Ժէ 8). «Եւ եղեւ վաղիւ անդր մտին Մովսէս եւ Ահարոն ի խորանն վկայութեան, և ահա դալարեցաւ գաւազանն Ահարոնի ի տանն Ղեւեայ եւ արձակեաց շառաւիղ եւ ծաղկեաց ծաղիկ եւ երեւեցոյց ընկոյզ»։ Յոթանասնից թարգմանությունն այս համարում գոր-

²⁰ Լ. Ռ. Ֆարնելի կարծիքով՝ հնարավոր է, որ Հերմեսը նախահելլենական շրջանի կրոնի գործող անձ է եղել. տե՛ս **Lewis Richard Farnell**, *The Cults of the Greek States*, v. V, Oxford, 1909, pp. 1-32, 76-84 etc.:

²¹ **A. L. Frothingham**, “Babylonian Origin of Hermes the Snake-God, and of the Caduceus I”, *American Journal of Archaeology*, vol. 20, № 2, 1916, Apr.-Jun., pp. 175-211.

²² Քանի որ օձ սողունի հետ կապված պատումների ծագմանը, խորհրդաբանությանը, առասպելներին վերաբերող ուսումնասիրությունները, դրանց հետ կապված աստվածաշնչյան տեղիների մեկնությունները բազմաթիվ են, ուստի այստեղ չենք անդադարանում։

²³ Այս իմաստով այն ընդգրկվում է հայերենի նորարարական բառակազմությունների շարքում. տե՛ս **Գ. Մուրադյան**, *Հունաբանությունները դասական հայերենում*, Երևան, 2010, էջ 78։

²⁴ **Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք** ի Հայս, որ են մեկնութիւն Յննդոց եւ ելից. Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս, աշխատ.՝ Հ. Մկրտիչ արքուակալ վարդապետի Մխիթարեան Ազգեւանց, Վենետիկ, 1826, *Փիլոնի այնոցիկ*, որ յեւսն է խնդրոց եւ լուծմանց, ՀԶ, էջ 520։

²⁵ ՆԲՀՀ, հտ. Բ, էջ 999։

ծածոմ է τὸ κάρυον բառը: Հունարեն κάρυον²⁶-ը, ինչպես նաև լատիներեն nuc (nucis f.)-ը²⁷ ընկուզեղենի տեսակի համար կիրառվող ընդհանրական բառեր են: Եբրայերեն շաֆէտ-ը²⁸, ըստ ՆԲՀԼ-ի, ունի և՛ ընկուզ, և՛ նուշ իմաստները: Սակայն եբրայերեն բնագրում Ահարոնի գավազանի համար գործածված ֆֆֆ - ֆֆֆ (Փիւք ժէ 23, WTT) բառը նշանակում է «նուշ», ունի նաև «նշենի» իմաստը: Կարծում ենք, որ սրանով է պայմանավորված այս համարի տարալեզու թարգմանություններում կա՛մ «ընկուզ», կա՛մ «նուշ» բառերի գործածությունը:

Փորձենք ուրվագծել «քարոզակ/գավազան»-ի բովանդակային զարգացման շղթան. բաբելոնյան մշակույթից գավազանի ձևը և գործառույթը փոխանցվել է հունականին, իսկ հունական մշակույթից՝ հռոմեականին, որից էլ՝ քրիստոնեությունը: Քրիստոնեության մեջ այն ձեռք է բերել նոր նշանակություն՝ խորքում պահպանելով բուն էությունը՝ լինել Արքայի (Աստծու) մունետիկ՝ ձեռքին ունենալով «անձեռնմխելիության» խորհրդանիշը՝ գավազանը: Քիչ չեն այն խորհրդանիշները, որոնք քրիստոնեությունը փոխառել և քրիստոնեացրել է անտիկ կամ հեթանոսական շրջանից (թագ, ծիրանի). նույնը գավազանի դեպքում է: Եթե քարոզը (անձը), որը գավազան էր կրում, ներկայանում էր թագավորի (և ոչ միայն) անունից, ապա նույնն էլ քրիստոնեության մեջ է. քարոզը՝ վարդապետը (հոգևորականն առհասարակ), որ Քրիստոսի՝ երկնային Թագավորի մունետիկ-սուրհանդակն է երկրի վրա, իր ձեռքին ունենալով այդ գավազանը, դառնում է «անձեռնմխելի» և պատգամը փոխանցողը:

Հին հունարենում «գավազան» բառի համար գործածվում են տարբեր հոմանիշներ՝ τὸ κηρύκειον, ἡ ῥάβδος, ἡ βακτηρία, τὸ σκῆπτρον²⁹: Հայերենում ևս այն ունի բազմաթիվ հոմանիշներ. բարսմունֆ, վարիչ/վարոց, ցուպ, մական, մկպոռիոն, թմբիչ և այլն: Անդրադառնալով հայ մատենագրության մեջ հանդիպող երկու բառերի՝ «վարոց», «բարսման-բարսմունք»:

²⁶ Greek-English Lexicon, compiled by H. G. Liddell and R. Scott, 881.

²⁷ Oxford Latin Dictionary, ed. by P. G. W. Glare, II ed., Oxford, 2012, 1331.

²⁸ Տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 781: ՆԲՀԼ-ն լատիներեն nuc-ը համահնչում է համարում նուշ բառին, սակայն Հրաչյա Աճառյանն այս տեսակետը չի ընդունում (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Գ, Երևան, 1926, էջ 472):

²⁹ ՆԲՀԼ-ում ենթադրվում է, որ այս բառը հայերենում գրվել է մկպոռիոն. ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 285. «Փոխանակ գրելոյ սկիպտոն կամ պակտիոն, որպէս յն. սգիբղոն կամ վագգիոն, այսինքն մական, գաւազան: Ունէր աշտիճան փառաւոր և մկպոռիոն, որ թարգմանի գաւազան իշխանական. ձ. Ա.»:

սը առավել կապված են զրադաշտականության³⁰ և հեթանոսության հետ: ՆԲՀԼ-ի «վարոց» բառահոգվածում նշվում է հունարեն ῥᾶβδος բառը: Հին և նոր Կտակարանների հունարեն բնագրում գործածված այս բառն Ընկալյալ Թարգմանության մեջ Թարգմանված է «գաւազան» և ոչ թե «վարոց», իսկ ῥᾶβδος բառը՝ «ցուպ» (Սաղմ. ԻԲ 4, Մատթ. Ժ 10): ՆԲՀԼ-ի «Վարոց» բառահոգվածում մեջբերում կա Օրբելյան պատմիչի երկից. «Դպիրք որք են կէս սարկաւագունք....կրել մոմեղէնս և զխաչագլուխ վարոցան»³¹: Նկատենք, որ Ստեփանոս Օրբելյանն այս ենթագլուխը ներկայացնելիս ամբողջությամբ օգտվել է Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին» երկից և նրանից քաղվածքը գրեթե բառացիորեն զետեղել «Պատմութեան» մեջ: Նշենք, սակայն, որ մեզ հետաքրքրող «վարոց» բառի փոխարեն Ներսես Լամբրոնացին գործածել է «գաւազան» բառը. «Դիակոնք, որք են կէս սարկաւագաց.... և զխաչագլուխ գաւազանսն կրել և զմոմեղէնսն»³²:

Եզնիկ Կողբացու երկում կարդում ենք. «....թե եւ զբարսմունսն ետ ցնա՝ առնել վասն իւր յաշտ, իբր ոչ եթե յՈրմզդի կամ ի յագելն էր գաւրութիւնն՝ այլ ի գաւազանսն»³³, կամ՝ «....որ զերկինս եւ զերկիր կարող էր առնել առանց բարսմանցն, զհայրն զիա՞րդ ոչ կարէր անհոգ առնել առանց գաւազանացն»³⁴: «Բարսմունք» բառը քանիցս օգտագործում է մատենագիրը: Հրաշյա Աճառյանը բառահոգվածի վերլուծականում նշում է, որ այն բավականին հին փոխառութիւն է, համաձայնում է ՆԲՀԼ-ի առաջարկած «պրս. պէրսէմ բառի հետ»³⁵ մտքին, սակայն միևնույն ժամանակ նշում է. «բայց սխալ է, երբ սրա հետ աւելացնում է (ՆԲՀԼ-ն) «ի ձայնիցս պէրսիյան, որ է գաւազան....»³⁶: Ղևոնդ Ալիշանն

³⁰ Զրադաշտականության մեջ ուտենու կամ մեկ այլ բույսի նյութերի կապոցը կրակապաշտության ժամանակ եղել է մոգպետի ձեռքին, տե՛ս **M. Boyce, Zoroastrians. Their Religious Beliefs and Practices**, London, 1979, p. 85:

³¹ Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 111: Քանի որ կիսասարկավագները գավազան կրելու իրավունք չունեն, խաչագլուխ վարոց կամ խաչագլուխ գաւազան ասելով՝ մեր կարծիքով նկատի են ունեցել խաչվառները, որոնք խաչագլուխ և ձողամբարձ դրոշակներ են: Դրանց վրա պատկերված են լինում հաշիւությունը, տնօրինական որևէ դեպք կամ Սբ Աստվածածինը:

³² Տե՛ս Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 84:

³³ **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, ՄՀ, հտ. Ա, Ե դար, էջ 468. «թէ և զբարսմունսն ետ նմա՝ առնել վասն իւր յաշտ, իբր ոչ եթէ յՈրմզդի կամ ի յագելն էր գործութիւնն՝ այլ ի գաւազանսն».
Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, Թարգմ. և ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, գլ. է, էջ 110:

³⁴ Նույն տեղում:

³⁵ ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 468:

³⁶ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հտ. Ա, էջ 429-430:

իր ուսումնասիրություններում նշում է. «Պերսամ, ի գիրս մեր Բարսմունք, որ նոյն է ըստ ոմանց վարսաման բուսոյ հետ (*Tymus Serpyllum*), որոյ ճիւղերն այլ հասարակօրէն բռնելիք կ'ըլլային կրակապաշտիցն: Մոգերու գլխաւորն կամ անոնց մէկն այլ ի ձեռքն ունէր «Ուռն, որով հրամայէր», ինչպէս գրուի եւ Ս. Յիզբուզտի վկայաբանութեան»³⁷ մէջ, եւ էր **գաւազան մի փայտեղէն**, նշանակ իշխանութեան»³⁸: Քանի որ մոգպետները, որպէս իշխանութեան խորհրդանիշ, իրենց ձեռքին ունեին «Ուռն և Բարսմունք»³⁹, ենթադրաբար հայերի մոտ այն եղել է նաև հեթանոսական շրջանում, թեպետ Ղևոնդ Ալիշանը, վերլուծելով Բայազետի հեթանոսական քանդակը, նշում է, թե «հասարակ քուրմի ձեւ կրնայ ըստիւլ.... որոց մէկն՝ **գաւազանակիրն՝ թուի ներքինի**»⁴⁰:

Հին Կտակարանում, երբ Աստված Մովսէս նախամարգարեին ուղարկում է Իսրայելի ժողովրդին եգիպտական գերությունից դուրս բերելու, նրա ձեռքի **գավազանը**, որը հովվության համար էր, դարձնում է **հրաշագործության միջոց և իշխանության խորհրդանիշ** (Ելք Դ 2-3, 17, 20 և այլն): Հետագայում անապատում Մովսէսը «նշանակ»-ի⁴¹ (τό σήμειον) վրա կբարձրացնի պղնձե օձը՝ բժշկելու կիզիչ օձերի խայթոցից տառապող մարդկանց (Թիւք ԻԱ 8-9): Քրիստոնեության մեջ գավազանի գործածությունը կապվում է Մովսէս նախամարգարեի գավազանի հետ:

³⁷ Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրությունում ճիշտ տարբերակն է՝ «ուռն, որով հրամայէր», մինչդեռ Հիզբուզտի վկայաբանության մեջ՝ «զուռն որով հրամայէր». ըստ երևույթին, որովք բառի հոգնակիակերտ Բ-ն գրչագրական սխալ է: Տե՛ս **Ներսէս Ռաժիկ**, *Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ*, ՄՀ, հտ. Գ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 462: Այսպես է նաև Մ. Ավգետյանի ուսումնասիրության մեջ. տե՛ս *Կապտար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց*, հտ. Բ, Վեներիկ, 1874, էջ 125: Հիզբուզտի վկայաբանությանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է Շավարշ Ագատյանը, տե՛ս **Շ. Ագատյան**, «Հիզբուզտի վկայաբանությունը վաղմիջնադարյան սրբախոսական գրականության համատեմատում», *Հայագիտության հարցեր*, 2019, թիվ 1, էջ 12-34:

³⁸ **Ղևոնդ Ալիշան**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց*, Վեներիկ, 1895, էջ 348-349: Ղևոնդ Ալիշանը հիշատակում է նաև Ե դարի մատենագիր Եղիշեի երկը, որտեղ ուռն իշխանության խորհրդանիշ է համարում, տե՛ս **Եղիշէ**, *Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին*, ՄՀ, հտ. Ա, Ե դար, էջ 654:

³⁹ **Ղևոնդ Ալիշան**, նշվ. աշխ., էջ 353:

⁴⁰ **Ղևոնդ Ալիշան**, նշվ. աշխ., էջ 464, ֆանդակի նկարը տե՛ս էջ 161:

⁴¹ «Նշանակ» բառի իմաստներից մեկն էլ «գաւազան»-ն է. *ՆԲՀ*, հտ. Բ, էջ 435:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում գավազանը⁴² գործածվել է դեռևս վաղ միջնադարում, ինչի մասին ավանդել են պատմագիրները⁴³: Պատմագրական կամ վարքագրական մատենագրության մեջ հանդիպում ենք մենակյացների, ճգնավորների, ովքեր շրջել են ցուպը (գաւազան, մական և այլն) ձեռքին⁴⁴: Փավստոս Բուզանդը, նկարագրելով Սբ Գրիգոր Լուսավորչի աշակերտ Դանիել Ասորու ճգնակեցական կյանքը, ընդգծում է, որ նա անգամ գավազան չուներ. «Միահանդերձ մաշկանափորտն սանդաղաւոր, եւ կերակուր իւր արմատք բանջարոց, եւ գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր»⁴⁵: Իսկ Մովսես Խորենացին, խոսելով Գրիգոր Լուսավորչի՝ եկեղեցի հիմնելու մասին, ասում է. «....փայտեղէն սեղան կազմէ, եւ նշան թողու անդ զգաւտին եւ զգաւազանն իւր»⁴⁶:

ԺԴ-ԺԵ դարի հայ մատենագիր Սբ Գրիգոր Տաթևացին «Վասն գաւազան տալոյ» քարոզում արձանագրում է գավազան շնորհելու 15 նշանակությունները⁴⁷: Կարծում ենք, այս ցանկին կարելի է ավելացնել գավազանի խորհրդին վերագրվող ևս մեկ նշանակություն, որն ականարկում է Սբ Հովհան Օձնեցին. «....այլ ամենեքին միոյ գաւթի միոյ քրիստոսական գաւազանին յարդարեսցին լինել հօտ»⁴⁸, այսինքն՝ մի եկեղեցի, մի հօտ՝ մեկտեղված Քրիստոսի գավազանի (իշխանության) ներքո:

⁴² Գավազանի նշանակության մասին տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, *Դիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր*, Կ. Պոլիս, 1740, էջ 168-170, նույնը տե՛ս *Էջմիածին*, 8, 1958 (ԺԵ), էջ 6-8: Հարկ է նշել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում օձագլուխ գավազանների գործածման առնչությամբ որևէ հստակ ժամանակաշրջան չի առանձնացվում, ուստի այս հարցի պատասխանը փորձելու ենք տալ մեր առաջիկա ուսումնասիրություններում:

⁴³ Առանձնանում են «ցուպ», «գավազան», «ասա» (այն ծիսական գործածություն չունի, զարդարանք պարզ է, ավելի բարձր, հասնում է մինչև ուտերը), «մական» հոմանիշները, սրանց մասին առավել մանրամասն տե՛ս *Պատմություն հին հայ տարագին, պատկերազարդ, հօրինեց Հ. Վարդան Վ. Հացունի*, Վենետիկ, 1923: Հայ մատենագրության էջերում հանդիպում են այդ բառերը, տե՛ս **Գրիգոր Մագիստրոս**, *Յաղագս խաչանշան գաւազանին, զոր ընծայեաց Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, ասացեալ խորհուրդ Խաչին*, ՄՀ, հտ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 190. նույնի՝ նորին Գրիգորի փիլիսոփայի ներբողեան ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ, ՄՀ, էջ 188 և այլն: Կաթողիկոսական գավազանի մասին տե՛ս Ս. **Խաչմանյան**, «Վիշապի խորհրդաբանությունը կաթողիկոսի հանդերձամբի համալիրում և նրա արտացոլումը միջնադարյան մանրանկարչության մեջ», *Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին*, Երևան, 2019, էջ 351-355:

⁴⁴ **Վարդան Հացունի**, *Պատմություն հին հայ տարագին, պատկերազարդ*, էջ 416:

⁴⁵ **Փաստոս Բուզանդ**, *Պատմություն Հայոց*, Երրորդ դարութիւն, ՄՀ, հտ. Ա, Ե դար, էջ 297, աշխարհաբար տե՛ս **Փավստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*, քաղգ., ներած. և ծանոթ. ակադեմիկոս Ստ. Մախաչյանցի, Երևան, 1968, էջ 95:

⁴⁶ **Մովսես Խորենացի**, *Պատմություն Սրբոց Հռիփսիմեանց*, ՄՀ, հտ. Բ, Ե դար, էջ 2196:

⁴⁷ **Գրիգոր Տաթևացի**, *Դիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր*, Կ. Պոլիս, 1740, էջ 168-170:

⁴⁸ *Յովհաննու Իմաստասիրի Աւանդույտ մատենագրութիւնք*, Վենետիկ, 1833, էջ 4:

«Գավազան» և «ցուպ» բառերի իմաստները Սբ Ներսես Շնորհալին «Բարձրացուցէք»-ի մեկնության մեջ բացատրում է այսպես. «Տէր մեր զնշան խաչիս, շարշարանաւք իւրաւք, իբր զցուպ ետ ի ձեռս Աղամա[յ] եւ կանգնեաց զնա, նաեւ գաւազան հաստատութեան, զի այլ մի անկցի: «Յուպ» զխաչս կոչէ, վասն զի սովաւ կանգնեաց զանկեալ բնութիւնս, եւ գաւազանաւ իմաստութեան մխիթարեաց զսգաւորս յանբժշկական ցաւոցն»⁴⁹: Միևնույն մեկնության մեջ նա անդրադառնում է նաև գավազանի խորհրդին՝ համեմելով աստվածաշնչյան օրինակներով. «Գաւազանիս խորհուրդ կրկին ունի ցուցանել զճշմարտութիւնն, նախ հովվական եւ ապա վարդապետական:նաեւ վարդապետական խրատու եւ իմաստութեամբ յաւրինին սովաւ ամենայն կարգ եկեղեցո[յ]. ոմանց՝ գաւազան փրկութեան եւ մխիթարութեան եւ ոմանց ստահակաց՝ բարկութեան եւ հարկանելո[յ]»⁵⁰:

Զանց չառնենք նաև «զաւրութեան գաւազան»⁵¹, «իմանալի գաւազան» բառակապակցությունները, որոնք մատենագրության մեջ գործածվում են որպես հաչի ստորոգելի⁵²: Քրիստոնեության մեջ անարգ մահվան գործիքը դառնում է փրկագործության միջոց: «Սրբոյ հաչի վերացման» կանոնում մի քանի անգամ հանդիպում ենք. «Գաւազան զաւրութեան ետուր մեզ», «Այսաւր պատուական հաչիւ քո /Որ է գաւազան զաւրութեան»⁵³, «Իսկ փայտ հաչի քո կենսատու / Գաւազան զաւրութեան կենաց մարդկան....»⁵⁴, «Հրաշակերտ եւ զաւրեղ փայտ հաչի քո, Քրիստոս, / Գաւազան զաւրութեան ի յերկրի երեւալ»⁵⁵ և այլն: Իսկ Դավիթ Անհաղթին վերագրվող «Ներբողեան ի Սուրբ Խաչն աստուածընկալ» եր-

⁴⁹ Ներսէս Շնորհալի, Պատճառ Բարձրացուցեացն եւ մեկնութիւն, ՄՀ, հտ. ԻԲ, ԺԲ դար, Գիրք Բ, Երևան, 2022, էջ 635:

⁵⁰ Նույն տեղում, էջ 654-655: Այս միտքն ավելի վաղ արձանագրված ենք տեսնում Տիմոթեոս Վարդապետի երկում. Յառաջաբան համառատ ի Մննդոց, զոր արարեալ է Տիմոթեա լուսաւոր Վարդապետի, ՄՀ, հտ. Ժ, Ժ դար, Երևան, 2011, էջ 911-912:

⁵¹ Այս բառակապակցությունն աստվածաշնչյան հիմք ունի. «Գաւազան զօրութեան առաքեացէ քեզ Տէր ի Սիոնէ, եւ տիրեսցես դու ի մէջ թշնամեաց» (Սաղմ. ճԺ 2, հմմտ. նաև Եզեկ. ԺԹ 11-14):

⁵² Քրիստոնեական այս և այլ խորհրդանիշների մասին տե՛ս Հ. Քյոսեյան, Հայ միջնադարյան արվեստի աստվածաբանություն, Երևան, 2021, էջ 102, 271-2, 274 և այլուր:

⁵³ Շարական. Կանոն Վերացման Սրբոյ հաչին. Առաջին ատուրն, ՄՀ, հտ. Ը, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 312:

⁵⁴ Շարական, նույն տեղում:

⁵⁵ Շարական, Կանոն Գիւտ հաչին, ՄՀ, հտ. Ը, էջ 328:

կուճ կարդում ենք. «Օրհնեալ ես, փայտ սուրբ, **իմանալի գաւազան....**»⁵⁶, «Օրհնեալ ես, փայտ սուրբ, **իմանալի գաւազան կենարար սուրբ հովուին....**»⁵⁷:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում գործածվող գավազաններն⁵⁸ արտաքինապես ունեն տարբեր տեսք՝ խաչագլուխ (բոլորակ՝ վրան խաչ), կորագլուխ (թե՛ տերևազարդ ու ծաղկազարդ, թե՛ միագլուխ օձի տեսքով), քառագլուխ (բոլորակ՝ շուրջը շորս օձ)⁵⁹ և այլն: Վարդապետական գավազանը նկարագրվում է հետևյալ ձևով. «Վարդապետական գավազանը օձագլուխ է՝ ներքևի մասում երկու օձեր՝ գլուխները բարձր»⁶⁰: Այն իր արտաքին տեսքով նման է Հերմեսի գավազանին: Հարկ է նշել նաև, որ Հայ եկեղեցում վարդապետներին էր վերապահված քարոզելը, ազդարարելը, դավանաբանական, աստվածաշնչյան դրույթներն ուսուցանելը, աշակերտներին եկեղեցու վարդապետությունը փոխանցելու իրավունքը, որը գալիս է հաստատելու դրա՝ հնագույն արմատներից ծագումը, բնականաբար վարդապետը նույն քարոզն է (անձը, քարոզիչը):

«Քարոզ» բառի գործածությունն Աստվածաշնչում

Յոթանասնից թարգմանություն մեջ քանիցս հանդիպում ենք **κηρύξ/κηρύσσω** բառերին: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ սրանք թարգմանվել են համապատասխանաբար «քարոզ»/«քարոզ կարդալ» բառերով:

Անդրադառնանք աստվածաշնչյան մի քանի տեղիների, որոնցում հունարեն բնագրի **κηρύσσω** բայը հայերեն թարգմանված է «քարոզ կարդալ» հարադիր բայով:

- καὶ προσέταξε Μωυσῆς καὶ ἐκήρυξεν ἐν τῇ παρεμβολῇ λέγων
 եւ հրամայեաց Մովսէս քարոզ կարդալ ի բանակին եւ ասել (Ելք ԼՁ 6)
- καὶ ἐκήρυξαν
 եւ քարոզ կարդացին (Դ Թագ. Ժ 20):

⁵⁶ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրությունք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վեներտիկ, 1932, էջ 20:

⁵⁷ Նույն տեղում, էջ 23:

⁵⁸ Հարկ է նշել, որ հայ իրականության պատմության մեջ գավազան կրել են նաև Կիլիկյան շրջանի արքաները. տե՛ս Վ. Թորոսյան, «Ֆրանսիական հետեր Կիլիկիայի հայոց արքաների թագադրման ծեսում», *ԲՄ*, 38, էջ 43-44:

⁵⁹ Մ. արք. Օրմանյան, *Միսական բառարան*, Երևան, 1992, էջ 63-64:

⁶⁰ Նույն տեղում, էջ 64: Ոլորված իրաններով օձերի, վիշապների առկայությունը գավազանների վրա, ֆանդակներում և մանրանկարչության մեջ ի հայտ եկող զարդանախշերի մասին տե՛ս Ա. Իսրայելյան, «Օձի և վիշապի բարի գործառույթները հայկական հավատալիքներում», *Վիշապը հեթանոսի և իրականության սահմանին*, Երևան, 2019, էջ 190-195:

Հինկտակարանյան այլ տեղիներում նույն նախադասության մեջ միասին գործածված հունարեն **κῆρυξ** և **κηρύσσω** բնագրային բառերը **Թարգմանելիս** նախադասությունը տրվել է «**քարոզ կարգալ**» ձևին:

➤ **καὶ ἐκῆρυξεν** ἔμπροσθεν αὐτοῦ **κῆρυξ**

եւ **քարոզ կարգայր** առաջի (Մննդ. ԽԱ 43)

➤ **καὶ ὁ κῆρυξ ἐκήρυξε** τοῖς ὄχλοις

եւ **քարոզ կարգայր** զօրոթեամբ եւ ասէր (Դան. Գ 4)

Վերոնշյալ օրինակներից չպետք է ենթադրել, որ **Թարգմանիչներն** առհասարակ զանց են առել այդ բառի **Թարգմանությունն** Ընկալյալ բնագրում.

➤ **καὶ ἀνοίξει τὸ στόμα αὐτοῦ ὡς κῆρυξ**

սակաւ ինչ տայ, եւ մեծամեծս նախատէ, եւ իբրեւ **քարոզ** բանայ զբերան իւր (Սիրաք Ի 5)

Մեկ այլ օրինակում **κῆρυγμα** - **հարոգութիւն** բառը **Թարգմանել** են «**քարոզ**»-ով (անձ) .

➤ **καὶ ἔστησαν λόγον διελθεῖν κῆρυγμα ἐν παντὶ Ἰσραήλ**

եւ հաստատեցին բան, զի անցցեն **քարոզքն** ընդ ամենայն Իսրայէլ (Բ Մնաց. Լ 5)

Հունարենն ունի **κῆρυξ** արմատով կազմված ὁ **στρατοκῆρυξ** բարդ բառը, որը Հին Կտակարանի Յոթանասնից **Թարգմանությունն** մեջ մեկ անգամ է գործածված (Գ Թագ. ԻԲ 36): Ընկալյալ **Թարգմանությունն** մեջ այն փոխադրված է «**քարոզ զօրուն**» («**զորքի քարոզը**»՝ անձը) բառակապակցությամբ:

Հատկանշական է նաև, որ **քարոզ կարդացողը/հայտարարողը** պետք է բարձր տեղում կանգնեք, ձեռքին գավազան ունենար: Մովսեսն, Աստծու գավազանը ձեռքին, վերադաձավ Եգիպտոս (Ելք Գ 20), գավազանն Աստծու տված իշխանության խորհրդանիշ էր: Ելից ԺԷ 9-ում Մովսեսն այն անվանում է «գավազանն Աստուծոյ» և **քարոզչի** նման՝ այդ գավազանը ձեռքին, տեսնում ենք նրան բարձր տեղում կանգնած՝ որպես իշխանություն ունեցող մեկի. «....կայցեմ ի վերայ գլխոյ բլրոյն եւ գաւազանն Աստուծոյ ի ձեռին իմում» (Ելից ԺԷ 9):

Գավազանի գործածությունը հանդիպում ենք նաև Հին Կտակարանի մեկ այլ դրվագում. ուշագրավ է, որ այս անգամ գավազանը հրեշտակի ձեռքին է: Խոսքը Գեղեոնի պատմությանն է վերաբերում: Տիրոջ պատգամաբեր հրեշտակի ձեռքի գավազանը դառնում է նաև **հրաշքի** միջոց. «Եւ ձգեաց հրեշտակն Տեառն զծայր գաւազանին, որ ի ձեռին իւրումբորբոքեցաւ հուր ի վիմէ անտի եւ եկեր զմիսն եւ զբաղարջսն» (Դատ. Զ 21): Հայ ձեռագրական արվեստի հնագույն նմուշներում հանդիպում ենք գավազանը (երբեմն խաչազուլիս) ձեռքին

հրեշտակի (մեզ հանդիպած մանրանկարներում գավազանով պատկերված է միայն պատգամաբեր Գաբրիել հրեշտակապետը), հատկապես Ավետման տեսարաններում⁶¹, երբեմն էլ Դրախտից արտաքսման տեսարանում⁶²:

Նոր Կտակարանում, սակայն, «քարոզ», «քարոզել» բառերն արդեն ունեն այլ իմաստ՝ երկնային Թագավորի խոսքի հաղորդում և ուսուցանում, ավետում: Մատթեոսի ավետարանում կարդում ենք, որ Քրիստոս լեռը բարձրացավ և այնտեղից ազդարարեց, ուսուցանեց երանիները և ուղենշեց արքայություն տանող ճանապարհները: Այս հատվածը հետագա թարգմանություններում առանձնացվեց «Լեռան քարոզ» վերնագրով (Մատթ. Ե գլ.): Օրենքի ուսուցիչներն ու փարիսեցիներն ուսուցանում էին Մովսեսի աթոռին նստած (Մատթ. ԻԳ 2), սակայն Քրիստոս չնստեց աթոռին, այլ լեռը բարձրացավ՝ ուսուցանելու, քարոզելու: Աթոռին նստողները՝ օրենսգետ ուսուցանողները, մարդկանց ծանրաբեռնում էին օրենքներով, քանի որ Քրիստոս չեկավ օրենքներով ծանրաբեռնելու, այլ Օրենքի անեծքից ազատելու (Գաղ. Գ 13), ուստի ուսուցանելիս չնստեց Մովսեսի աթոռին: Մովսեսն ինքը Օրենքը ստացել էր լեռան վրա, ուստի Քրիստոս ևս նոր Կտակարանի սիրո և շնորհի օրենքը լեռան վրայից փոխանցեց: Երբ Աստված Մովսեսին Օրենքը պիտի տար Սինա լեռան վրա, ժողովրդին պատվիրեց չմոտենալ լեռանը, որ չմեռնեն, իսկ այստեղ տեսնում ենք Հիսուսի շուրջը հավաքված ժողովրդին: Օրենքը մարդուն Աստծուց հեռու է վանում և սպանում, մինչդեռ շնորհը մարդուն Աստծուն է մոտեցնում ու կյանք տալիս: Ուստի քարոզը նոր Կտակարանում սովորեցնող և արքայության ճանապարհը ցույց տվող կենսատու խոսքն է:

«Քարոզ» բառը հայերեն թարգմանական և իմֆնուրույն մատենագրության մեջ

Հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրության մեջ «քարոզ» բառն իմաստային տարբեր նրբերանգներով բազմիցս է հանդիպում:

«Քարոզ» բառի իմաստներից մեկը «երաժիշտ, նուագաձու, փողար»-ն է, որի բացատրությունը լուսաբանելու համար ՆԲՀԼ-ն օրինակ է քաղում Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրություն»-ից. «Ներոն յՈղոմպիադին պսակեցաւ,

⁶¹ Sĕ'u Codex Etschmiadzin: Vollständige Faksimile-Ausgabe von Codex 2374 des Matenadaran Mesrop Maštoc' in Erevan. Kommentar./Komm.: H. Buschhausen, H. Buschhausen, A. Mat'evosyan, Graz/Austria, 2001, S. 215, 217. ՄՄ 2378, ք. 228աք:

⁶² Տ. Գրիգորյան, ««Դիվամարտիկ Քրիստոսը» և վիշապների պատկերագրական ավանդույթը միջնադարյան հայ արվեստում», Վիշապը հեթաթի և իրականության սահմանին, Երևան, 2019, էջ 376. ՄՄ 10805, ք. 9ա:

քանզի **քարոզացն** (*cerycas, tragoedos, citharistasque*) և երգեցկացն քնարահարաց և ի կառս յովանակականս և ի կատարեալսն և ի տասն յովանակեանսն յաղթեաց»։ Միայն հայերենով պահպանված մեկ այլ հատվածում ևս, որը բացակայում է ՆԲՀԼ-ի օրինակներում, հանդիպում ենք «քարոզ» բառի միևնույն իմաստին. «Դարձեալ ներոն ի Սիթմիա և ի Պիթիա և յԱկտիա և **քարոզս** և երգեցիկս և քնարահարս (*cerycas, tragoedos et citharistas*) ետ և պսակեաց»⁶³։

Մեջբերյալ հատվածը վկայում է այն մրցույթների մասին, որոնք անտիկ շրջանում կազմակերպվում էին քարոզների, շեփորահարների և երաժիշտների միջև։ Այս մասին հիշատակությունները բազմաթիվ են և տարաբնույթ⁶⁴։

Է դարի բյուզանդացի հեղինակ Գևորգ Պիսիդեսի «Վեցօրեայք» երկի հայերեն թարգմանության մեջ «քարոզ» բառը գործածվել է «մունետիկ», «սուրհանդակ» իմաստով. «մշակ երկնրնթաց՝ **քարոզ** գիշերի»⁶⁵, «**քարոզ** կենաց լինի սատակմանն»⁶⁶։

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուում «քարոզ» բառն ունի տարբեր իմաստներ։ «Առաջնորդ», «ղեկավար» իմաստով գործածվում է մի քանի կանոններում. «ԼԴ.դ.եւ եղեւ անդ գլուխ եւ առաջնորդ եւ **քարոզ**, հաստատեաց զեկեղեցիս եւ կարգեաց քահանայս եւ պաշտանեայս», «ԼԴ.դ.շինեաց անդ զեկեղեցիս յառաջնորդութեան իւրում եւ եղեւ գլուխ եւ **քարոզ**, կարգեաց ի նմա քահանայս եւ պաշտանեայս», «ԼԴ.է.գի նա եղեւ առաջնորդ եւ հրամանատար, **քարոզ** եւ գլուխ, շինեաց եկեղեցիս, եւ կարգեաց ի նմա քահանայս եւ պաշտանեայս»⁶⁷, «ԼԴ. եւ յետ վախճանելոյ առաքելոցն եղեն նոքա առաջնորդք, **քարոզք** եւ հրամանատարք Աւետարանին և եկեղեցւոյ սրբոյ....»⁶⁸։

Հարկ է անդրադառնալ «Կանոնագիրք Հայոց»-ում հանդիպող մեկ այլ խնդրի ևս. «քարոզել» բայի բազմիմաստությունը հաշվի չառնելու պարագայում կարելի է ենթադրել, որ կանոններում հակասություններ կան, սակայն իրա-

⁶³ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայ, աշխատ.՝ Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Ազգեւանք, Վենետիկ, 1818, մասն Բ, էջ 272. 2081, 2082: Փակագծերում մեջբերում ենք Ավգերյանի լատիներեն թարգմանությունը։

⁶⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Al. Wolicki**, "The Heralds and the Games in Archaic and Classical Greece", *Nikephoros* 15 (2002), 69-97.

⁶⁵ Վեցօրեայք Գեորգայ Պիսիդեայ իմաստասիրի, տպագրեալ հանդերձ լոյն բնագրաւ եւ լուսաբանեալ ի Հ. Աթանաս Վ. Տիրոյեան Մխիթարեան, Վենետիկ, 1900, էջ 48-49:

⁶⁶ Նույն տեղում, էջ 106-107:

⁶⁷ Կանոնագիրք Հայոց, Կանոնի եւ սահմանի, զոր եղին աշակերտն Քրիստոսի ի սուրբ եկեղեցիս, յետ վերանալոյ Տեառն ժողովեալի ի վերնատունն. ԼԴ, հտ. Ա, աշխատ. Վազգեն Հակոբյան, Երևան, 1964, էջ 60-61:

⁶⁸ Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, Կանոնի առաջնականի, էջ 54:

կանում նույն բառը տարբեր կանոններում տարբեր իմաստներով է գործածված: Օրինակ. «Երկրորդ նիկիականը» կանոնախմբում սարկավագին արգելվում է Սբ Պատարագի ժամանակ քարոզ ասել (բացառություն են եպիսկոպոսի թույլտվությամբ եզակի դեպքերը, երբ խոսքը վերաբերում է քարոզխոսությանը): «ԻԱ.նմանապէս եւ սարկաւագին՝ ո՛չ քարոզել եւ ո՛չ սպասաւորել»⁶⁹: Սակայն Սբ Սահակ Պարթևի կանոններում կարգում ենք. «Ե.եւ համարս պահանջել յերիցանց և ի սարկաւագաց ժամուցն քարոզութեանցն աղաւթիցն մատուցման»⁷⁰: Առաջին հատվածում խոսքը վերաբերում է քարոզ խոսելուն, իսկ երկրորդ հատվածում՝ ծիսական աղոթք-մաղթանքներ ասելուն, այս ամենն ի մտի ունենալով՝ հարկ է նուրբ և ուշադիր լինել նման դեպքերում: Ծեսում «քարոզ» կոչվում են նաև ծիսակատարությունների ժամանակ արվող ազգարարությունները, որոնք հնչեցնելը սարկավագի պարտականությունն է⁷¹, ինչպես Սբ Ներսես Լամբրոնացին է նշում. «Սարկաւագն յորժամ զայսչափ առատութիւնս սիրոյ և խոստմանցն Աստուծոյ ծանեալ ի սաղմոսելն ամենեքեան, ապա հրաման տայ ամենեցուն....»⁷² («հրաման տալ» = «քարոզ ասել» – է. Ա.): Ազգարարություն-քարոզների օրինակները բազմաթիվ են «Մշտոց» ծիսարանի տարբեր կանոններում կամ «Խորհրդատետր»-ում. «Սարկաւագն քարոզէ», «Սարկաւագն քարոզեսցէ»⁷³ կամ «Եւ առ մի մի սաղմոսն քարոզէ սարկաւագն»⁷⁴: Նշենք նաև, որ քարոզները կարդացվում են «ձայնիւ», իսկ պահոց օրերին՝ «թիւ»:

Հայ մատենագրության մեջ «քարոզ»-ի հետ իմաստային առնչություն ունեցող մի քանի բառ ենք առանձնացրել. առաջինը «կարապետ» բառն է, որը, ի թիվս այլ իմաստների, ունի նաև «քարոզ» նշանակությունը. «....հողիչ ճանապարհի, իբրև առաջնորդ և իբր առաջընթաց սուրհանդակ, նախընթաց, աւետաւոր, քարոզ և առաւել սեպհականեալ անուն Յովհաննու Մկրտչի»⁷⁵: Սբ Հովհան Ոսկեբերանի՝ Մատթեոսի ավետարանի մեկնության հայերեն թարգմանության մեջ հունարեն Κηρύξ բառը փոխադրվել է «կարապետ» բառով՝ «Ընդէ՛ր թողեալ

⁶⁹ Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխատ. Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 76:

⁷⁰ Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 369-370:

⁷¹ Վարդան Հացունի, Պատմութիւն հայոց աղօթամատուցին, Ս. Էջմիածին, 2014, էջ 95:

⁷² Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ, Մեկնութիւն Խորհրդոյ Պատարագին, էջ 244:

⁷³ Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց, Վաղարշապատ, 2016, էջ 17:

⁷⁴ Մայր Մշտոց, հտ. Ա, գիրք Ա, (Ժ դար), աշխատ.՝ Գեորգ Տէր-Վարդանեանի, Սբ Էջմիածին, 2012, էջ 101:

⁷⁵ ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 1064:

զթագաւորն ի կարապետն հարեալ իցես»⁷⁶: Սբ Հովհան Ոսկեբերանի սույն մեկնութեան մեջ հանդիպում ենք նաև «կարապետել» բային. «մարգարէքն ի վաղուց յառաջագոյն կարապետէին», «մարգարէքն ցնծացեալ կարապետէին»⁷⁷ և այլն, որն ունի քարոզել, նախաձայնել, կանխասել իմաստը:

«Կարապետ»-ը Հովհաննես Մկրտչի պատվանունն է. նրան կոչում են Հովհաննես Կարապետ կամ Նախակարապետ (առաջին կարապետ): Աստվածաշունչը նրան Տիրոջ ճանապարհը պատրաստողն է համարում. «Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. Ուղիղ արարէք զճանապարհն Տեառն» (Յովհ. Ա 23) «հողիչ ճանապարհի»-ն: Նա նաև երկնային Թագավորի հրամանն ազդարարողը, քարոզիչը, Աստծու պատգամը բերող մունետիկն է. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մատթ. Գ 3) «Քարոզ»-ը: Այսինքն՝ Հովհաննես Մկրտիչը և՛ առաջնորդողն է, և՛ քարոզը (սուրհանդակը):

Սբ ուշադրութիւնը գրավեց նաև «նախաքարոզ» բառը, որը Սբ Ներսես Շնորհալին գործածում է մարգարեներին բնութագրելու համար. «Փառք են սոքա ազգի մարդկան, /Եւ լուսատուք տիեզերաց, Քրիստոսի նախաքարոզք, /Որում պատիւ, փա՛ռք յաւիտեանս»⁷⁸: Մեկնաբանելով Սբ Ներսես Շնորհալուն՝ կարող ենք ասել, որ մարգարեները Քրիստոսի գալստյան առաջին կարապետները (նախակարապետներ)՝ նախաքարոզները եղան:

Հաջորդը մեր լեզվի ճկունութիւնը, բառակազմական մեծ հնարավորութիւնները ցույց տվող մի բառ է, որը հանդիպել ենք հայ մատենագրութեան էջերում՝ «աւետաքարոզ»: Ինչպես «աստվածաշունչ» բառը ստեղծվեց որպես Սուրբ Գիրքը բնութագրող բառ՝ բացահայտելով մեր սուրբ թարգմանիչների՝ հայերենի և սուրբգրային ճշմարտութիւնների նուրբ և խոր իմացութիւնն ու ըմբռնումը՝ հենվելով «ամենայն Գիրք աստուածաշունչք» (Բ Տիմ. Գ 16, հմմտ. հուն. *πᾶσα γράφῃ θεόπνευστος*) արտահայտութեան վրա, նույն կերպ էլ «աւետաքարոզ» բառն է դիպուկ բնութագրում «Քարոզ»-ը թե՛ բառիմաստային, թե՛ ժանրային առումներով, որովհետև եկեղեցու հիմնումից հետո «Քարոզ»-ի բուն նպատակը ավետելն էր և է՛: Այս բառի կազմութիւնն անգամ հուշում է իմաստը՝

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ *Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս, գիրք Ա, Վենետիկ, 1826, էջ 36, 50 և այլուր, հմմտ. հունարէն բնագիր՝ Sancti Patris nostri Joannis Chrysostomi Archiepiscopi Constantinopolitani Homiliae in Matthæum in Patrologiae cursus completus, edited by J.-P. Migne. Series Graeca, vol. 57, Paris, 1862, pp. 183.50, 185.44, 186.20:*

⁷⁸ *Ներսէս Շնորհալի, Հէ. Տաղ սրբոց մարգարէիցն, ի Ներսէս կաթողիկոսէ հայոց, ՄՀ, հտ. ԻԱ, ԺԲ դար, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 812:*

«Քարոզ աւետեաց, աւետաւոր»⁷⁹: Հնարավոր է, որ այն լինի Սբ Գրիգոր Նարեկացու նորակազմութիւններից.

«Ի ձայն բիւրակերպ՝ աւղինատիպ լրումն, /Աւետաքարոզ՝ տրտմականաց դասուց»⁸⁰:

Միայն թե Հրաչ Միրզոյանի կազմած Սբ Գրիգոր Նարեկացու նորակազմութիւնների ցանկում այն բացակայում է⁸¹:

Սբ Ներսես Շնորհալու երկերում այս բառը լայն կիրառութիւն ունի. «Յայր Բեթղահնմի, ի տուն Եփրաթայ, /Ի քաղաք Դաւթի հրեշտակերամ դասուց, /Ստոր իջեալ պարեն ընդ հովիւան աւետաքարոզ, ը՛, / Փա՛ռք ի բարձունս, երգով»⁸²: Նրա երկերում հանդիպում ենք նաև նույնիմաստ «աւետաբեր քարոզ» բառակապակցութեանը. «Երկիրս երկնայնոցն եղեւ տեղի եւ էջք, /Որ աւետաբեր քարոզ՝ /Ի յունկն Եւայի դըստերց գոչեն ըզձայն»⁸³:

Հայ մատենագրութեան մեջ՝ հատկապես ձեռագրերի հիշատակարաններում, այս ածականը բնութագրում է Ավետարանը. «....որք հանդիպիք այս սուրբ եւ աւետաքարոզ Աւետարանիս»⁸⁴, «Այսմ աստուածախաւս աւետաքարոզ սուրբ Աւետարանիս....»⁸⁵, «Արդ, այսմ աստուածախաւս եւ աւետաքարոզ սուրբ Աւետարանիս....»⁸⁶, «....աւետաքարոզ տիեզերահրաւէր, կենսաբեր սուրբ Աւետարանիս»⁸⁷ և այլն:

Վարդուհի Բարսեղյանը, բանասիրական քննութեան ենթարկելով Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկը, այս բառը ներկայացնում է որպէս Անանիա Սանահնեցու նորակազմութիւն⁸⁸: Քանի որ վերևում բեր-

⁷⁹ ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 395:

⁸⁰ Գրիգոր Նարեկացի, *Գանձտետր*, Տաղ Սուրբ Հոգւոյն զալստեան, Գրիգորի Նարեկացոյ, ՄՀ, հտ. ԺԲ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 674:

⁸¹ Հ. Միրզոյան, «Նարեկացու բառաշխարհը», *ԲեՀ*, 2005, № 1, էջ 85-114:

⁸² Ներսէս Շնորհալի, *ԺԸ. Տաղ [Ծննդեան]* ի Նեսիսէ կաթողիկոսէ, ՄՀ, հտ. ԻԱ, ԺԲ դար, Գիրք Ա, էջ 691:

⁸³ Ներսէս Շնորհալի, *ԽԷ. Տաղ [Յարութեան]*, ՄՀ, հտ. ԻԱ, ԺԲ դար, Գիրք Ա, էջ 752:

⁸⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 447:

⁸⁵ Կարապետ Տէր Սարգսեան Մարգարեանց, «Աւետարան եւ հիշատակարան մի», *Արարատ*, քիւ 9, 1874 (Ե), էջ 226:

⁸⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Մասն Բ, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2020, էջ 140:

⁸⁷ Նույն տեղում, էջ 261:

⁸⁸ Վ. Բարսեղյան, «Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկի նորաբանութիւնները և դրանց իմաստաբանական առանձնահատկութիւններ», *Գիտական Արցախ*, № 4 (23), 2024, էջ 125. «Աւետաբարոզ՝ քարոզելով ավետիս բերող՝ ավետ+ա+բարոզ՝ բարդ բառ»:

ված մեր օրինակը Սբ Գրիգոր Նարեկացուց է, կարծում ենք, որ նորակազմությունն Անանիա Սանահնեցուն վերագրելն այնքան էլ ճիշտ չէ: Նորակազմությունը Անանիա Սանահնեցուն վերագրելու օգտին կարող էր նպաստել նրա՝ «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի»⁸⁹ երկասիրության պահպանված հատվածից բերված օրինակը. «Այլ զի էջ Յովհաննէս ի դժոխսն իբրեւ զկարապետ Բանին, որպէս Եղիա վերացաւ յերկինս իբրեւ **աւետաքարող վերնոցն**»⁹⁰: Սակայն նորակազմությունը Սբ Գրիգոր Նարեկացունն է, թե՛ ոչ, ևս դժվար է ասել, քանի որ բառահոգվածի օրինակներում նԲՀԼ-ն առաջինը նշում է նաև՝ «Կանոն»։ Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ հրատարակված «Կանոնագիրք Հայոց»-ում այդ բառը չգտանք, հավանական է, որ այն անտիպ կանոններում է պահպանվել:

Հայ մատենագրության մեջ պահպանվել են «քարող» արմատով կազմված որոշ բարդ բառեր ևս⁹¹, որոնք առաջին հերթին դավանաբանական-աստվածաբանական արժեք ունեն և աչքի են ընկնում կառուցվածքի կատարելությամբ, բյուրեղացված լեզվամտածողությամբ, խաչքարին բնորոշ գեղագիտությամբ. **միաքարող, նախաքարող, տիեզերաքարող, քաջաքարող, առաքելաքարող, աստուածաքարող** (հմմտ. θεοκλήρυς), **տիրաքարող, խաչաքարող, մարգարէաքարող, ճշմարտաքարող**⁹² և այլն: Խաչիկ Հարությունյանի՝ «Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն (Թ-Ժն դարեր)» գրքի «Բառարան. նորահայտ բառեր և բառերի նոր վկայություններ Թ-Ժն դդ. հիշատակարաններում» բաժնում հանդիպում են հետևյալ բառերը՝ **աւետարանաքարող, բարձրաքարող, կայծակնաքարող, մակաքարող**⁹³:

⁸⁹ **Հ. Քյոսեյան**, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ. Ա. Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 68-75:

⁹⁰ Յաղագս Յովհաննու Մկրտչի Անանիա վարդապետի ասացեալ, ՄՀ, հտ. ԺԵ, ԺԱ դար, Երևան, 2016, էջ 241, նաև՝ **Հ. Քյոսեյան**, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ. Ա. Անանիա Սանահնեցի, էջ 168: Այս երկն աներկբայորեն պատկանում է Անանիա Սանահնեցուն կամ Հաղբատեցուն:

⁹¹ Այս բառերից մի ֆանիսը հիշատակում է Հր. Անադյանը, տե՛ս **Հ. Անադյան**, Հայերեն արմատական բառարան, հտ. Դ, էջ 563:

⁹² «Ճշմարտաբարող»-ը մաս է կազմում Ափրահատի հայերեն թարգմանության նորաբանությունների, տե՛ս **Պ. Тер-Петросян**, Армения..., сс. 183, 185:

⁹³ **Խ. Ա. Հարությունյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն (Թ-Ժն դարեր), Գրք Ա, Հիշատակարանների բառապաշարը (ուսումնասիրություն և բառարան), Երևան, 2022, էջ 285, 291, 327, 347:

Քարոզ, խրատ, հառ⁹⁴

Քարոզը նաև միջնադարյան մատենագրության մեջ հաճախ հանդիպող գրական տեսակ է: Այն իր կառուցվածքով և բովանդակությամբ նմանվում է խրատին, ճառին: Երբեմն թվում է, թե դրանք նույն իմաստն ունեն, ինչպես սկիզբը, պատճառը, նախադրությունը և այլն, սակայն միևնույն ժամանակ որոշակի են մատենագրական այդ ժանրերի տարբերությունները: Քարոզը՝ որպես մատենագրական ժանրային միավոր, նախատեսված է ոչ եկեղեցական (որպես ուսյալ, գիտակ դասի) շրջանակի համար, որի միջոցով հասարակությանն են փոխանցվում կրոնադավանաբանական պարզ բացատրություններ, աստվածաշնչյան պատգամներ, բարոյախրատական ուսուցումներ: Նպատակն է եկեղեցու համայնքներում արթուն պահել քրիստոնեական հիմնարար սկզբունքները: Այն միջոց է Քրիստոսի՝ որպես երկնային Թագավորի պատգամների պահպանման ու փոխանցման շարունակականության համար: Ծիսապաշտամունքային արարողությունների ընթացքում քարոզը խոսվում է եկեղեցու բեմից՝ բարձր տեղից, ըստ Առակաց գրքի հետևյալ խոսքի. «Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի եւ ի հրապարակս համարձակութիւն բերէ, եւ ի գլուխս պարսպաց քարոզի եւ առ դրունս հզօրաց յաճախէ» (Առակ. Ա 20-21): Համամ Արևելցու բնորոշմամբ՝ Իմաստությունը (Առակ. Ա 2) Քրիստոսն է. «Այս է զհարուստ եւ զհզօր զօրութիւն Աստուծոյ, որ է Բանն Աստուած, որ օրինական Սողոմոնի ի լրման ժամանակաց ծանոյց զինքն մեզ»⁹⁵, ով քարոզեց լեռան վրայից:

Ինչպես նշեցինք, քարոզն արվել է բարձր տեղերից: Այս մասին հիշատակություն ունեն և՛ Ընդհանրական, և՛ Հայ եկեղեցու հայրերը: Սբ Եփրեմ Ասորու երկերում ընդգծվում է բարձր տեղից քարոզ ասելը. «ի խորոց ելանէ քարոզութիւն, զոր դուքն կամիք ի բարձանց լսել զնա»⁹⁶:

Սբ Գրիգոր Տաթևացին իր ուսուցչին՝ Սբ Հովհան Որոտնեցուն նվիրված ներբողում ևս շեշտադրում է բարձր տեղ ելնելը և այնտեղից խոսելը և ուսուցանելը. «...ելեալ ի վերայ աշտարակի գերամբարձութեան, ձայնէր ի լուր ամենե-

⁹⁴ Քանի որ ուսումնասիրվող նյութը ծավալուն է և հոդվածում մեր առջև դրված խնդիրն այլ է, ուստի այն ներկայացնում ենք համառոտ, իսկ առավել մանրամասն կանդաղատումն ատաղիկայում:

⁹⁵ Համամայ ասացեալ մեկնություն, ՄՀ, հտ. Թ, Թ դար, էջ 193: Թե ինչպես է ընկալվել Իմաստությունը հին եկեղեցական մատենագրության մեջ և այդ գաղափարի ընկալումն ինչ փոփոխություններ է կրել առհասարակ, տե՛ս Շ. Ժ. Վրդ. Անանյան, *Երկխոսություն և մեկնություն: Դավազներ քրիստոնեական մեկնարկեստի ծագման պատմությունից*, էջմիածին, 2022, էջ 91-108, նույնի՝ «Համամ Արևելցի՝ մեկնիչ Սուրբ Գրոց», էջմիածին, Ե, 2009, էջ 56:

⁹⁶ Տե՛ս Լ. Թեր-Պետրոսյան, *Армения...*, с. 291.

ցունց»⁹⁷: Սբ Գրիգոր Տաթևացին «նորին դարձեալ քարոզ վասն երկրագործաց» քարոզում անդրադարձել է քարոզի կառուցվածքին՝ այն բաժանելով 5 մասի՝ բնաբան, նախերգան, ֆառոզ, յորդորակ, օրհնութիւն⁹⁸:

Ճառերը, ի տարբերություն քարոզների, նախատեսված են առավել ուսումնասեր խավի համար: Դրանք լինում են երկու տեսակի՝ բարոյաբանական, դավանական և դավանաբանական: Բարոյաբանական ճառական միավորի լավագույն օրինակներից է Սբ Հովհան Ոսկեբերանի՝ Մատթեոսի ավետարանի մեկնությունը: Դավանական ճառային միավորներում, ի տարբերություն բարոյաբանականի, նախ շարադրվում են գաղափարական հակառակորդի տեսակետները, այնուհետև՝ այդ տեսակետների աստվածաբանական ժխտումը: Սրա լավագույն օրինակներից են Սբ Աթանաս Ալեքսանդրացու, Սբ Գրիգոր Նազիանզացու ճառերը:

Հակոբ Քյոսեյանը, անդրադառնալով Եսայի նշեցու գրական ժառանգությանը, իրավամբ նշում է. «...ճառերը խոսվել են նախ համալսարանական լսարաններում՝ մասը կազմելով «Աստվածաշնչական մեկնություն եւ աստուածաբանություն» առարկայի»⁹⁹: Մեր ուսումնասիրության ընթացքում առաջմ չենք հանդիպել որևէ տեղիի, որը կբացատրեր ճառերի կառուցվածքային բնույթը: Այդուհանդերձ, ելնելով մատենագրական տվյալներից, կարելի է եզրակացնել, որ ճառերը հիմնականում ունեն հետևյալ կառուցվածքը. բնաբան, որը հնարավոր է ներառի աստվածանշյան, աստվածաբանական կամ փիլիսոփայական ընդհանուր տեղեկություն, որին հաջորդում է երկարաշունչ բացատրություն-մեկնություն, և հորդորակ, որը ոչ բոլոր ճառական միավորներին է հատուկ: Վերջինս ենթադրում է բարոյախրատական ամփոփում, պատգամ:

Հայ մատենագրության մեջ խրատն¹⁰⁰ արտացոլում է բարոյական աստվածաբանության տեսական ու գործնական սկզբունքները: Բազմաթիվ են խրատների գործածության ոլորտները:

Մատենագրության մեջ հաճախ ճառ, քարոզ, խրատ եզրույթները միահյուսված են գործածվում. օրինակ՝ Տիրատուր Կիլիկեցու կամ Եսայի նշեցու ճառերի վերնագրերն սկսվում են «քարոզ» բառով: Մեկ ուրիշ առանձնահատկություն

⁹⁷ Նորին Գրիգորի ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցոյ, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1741, էջ 712:

⁹⁸ Նորին դարձեալ ֆառոզ վասն երկրագործաց..., Ամառան, էջ 114:

⁹⁹ Եսայի նշեցի, Ճառք, աշխատ. Յակոբ Քէոսէեանի, Երևան, 2024, էջ 7:

¹⁰⁰ Նշենմ նաև, որ «խրատ»-ը «Պիտոյից գրում» նախադասական վարժության տեսակ է, տե՛ս Գիրք պիտոյից, աշխատ. Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 44:

ևս. մեկնություններում և լուծմունքներում երբեմն տեղ են գտնում քարոզներ, օրինակ՝ Սբ Գրիգոր Տաթևացու Հոբի գրքի լուծմունքում¹⁰¹, իսկ Հովհան Ոսկեբերանի դեպքում մեկնությունը բաղկացած է ճառային միավորներից, կամ՝ Բարսեղ Մեծի Վեցօրյա արարչությունը նվիրված մեկնությունը կոչվում է ճառ և այլն: Մեկ այլ դեպքում գանձը վերնագրվում է «քարոզ» բառով¹⁰². «Քարոզ սրբոց հրեշտակապետացն»¹⁰³, որոնց երբեմն կցված են լինում տաղեր: Արմենուհի Քյոշկերյանը դրանք համեմատելի է համարում ձեռագրերում Բարսեղ Կեսարացու անվամբ պահպանված «Քարոզ զատկաց» երկի հետ¹⁰⁴:

Դավանաբանական երկերում «քարոզեմ» բայը գործածված է ազդարարել, հայտարարել, հռչակել իմաստներով. «Աստուածածին դաւանեմք, /Ջծնեալդ Աստուած քարոզեմք. /Հնդ հրեշտակին քեզ գոչեմք, /Զուրախութիւնն աւետեմք»¹⁰⁵ կամ՝ «երկուս ըստ բնութեան, եւ մի ըստ միաւորութեան զՔրիստոս քարոզել»¹⁰⁶:

Արդի հայերենում «քարոզ» բառը հիմնականում գործածվում է մեկ իմաստով: Այսօր արդեն «քարոզ» ասելով՝ հասկանում ենք միայն Սբ Պատարագի ընթացքում պատարագիչ հոգևորականի խոսքը բեմից: Քարոզխոսության նյութն Աստվածաշունչն է, մասնավորաբար Ավետարանը, Քրիստոսի վարդապետությունն ու մարդկությանը փոխանցված բարոյական սկզբունքները: Քրիստոնեական վարդապետության հիմքը կազմող բանաձևումները, դավանաբանական հաստատումները՝ դոգմաները, կազմվել են դեռևս Դ-Ե դարերում իմացաբանական բարդ եզրույթներով, իմաստասիրական եզրաբանությամբ, որոնք քարոզխոսության ժամանակ անհրաժեշտություն են, և դրանք զուգադրվում են հավատի, քրիստոնեական կենցաղավարության, բարոյական սկզբունքների հետ:

¹⁰¹ Գրիգոր Տաթևացի, *Լուծմունք Յոբայ*, աշխատ. է. Սարիբեկյանի, Երևան, 2023, էջ 24-35, 36-49:

¹⁰² Այս գանձ-փառգների փոխառնչությունը նկատել է Արմինե Քյոշկերյանը, տե՛ս **Ներսէս Շնորհալի**, *Տաղեր և Գանձեր*, աշխատ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1987, էջ ԺԵ, Ա. Քյոշկերյան, «Գրիգոր Նարեկացու գանձերն ու գանձարանների սկզբնավորումը», *ԲՄ*, 10, 1971, էջ 55-68:

¹⁰³ **Ներսէս Շնորհալի**, *ԾԵ. Քարոզ սրբոց հրեշտակապետացն*, արարեալ Ներսիսի հայոց կաթողիկոսի, ՄՀ, հտ. ԻԱ, ԺԲ դար, Գիրք Ա, էջ 884:

¹⁰⁴ Ա. Քյոշկերյան, նշվ. աշխ., էջ ԺԸ. տե՛ս ՄՄ 2061, ք. 2ա-6բ:

¹⁰⁵ **Ներսէս Շնորհալի**, *Տաղեր և Գանձեր*, աշխատ. Ա. Քյոշկերյանի, էջ 22:

¹⁰⁶ **Յովհան Աւծնեցի**, *Նորին ընդդէմ երեսութեանաց*, ՄՀ, հտ. է, Ը դար, Յաւելուած, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 51:

Եզրակացություններ

Հոգվածում ներկայացրինք և ուղենշեցինք «քարոզ» բառի՝ դարերի ընթացքում կրած իմաստային փոփոխությունները, բառօգտագործման զանազան դրսևորումները: Հատկապես վաղ թարգմանական և ինքնուրույն մատենագրություն մեջ «քարոզ»-ն ընկալվել է իր նախնական իմաստով՝ մարդ, որը կա՛մ հայտարարող անձն է, կա՛մ երաժիշտը, կա՛մ ավետաբերը, մունետիկը: Բառիմաստի պատմական զարգացման նախնական փուլում այն գործածվել է որպես անձնանիշ գոյական՝ անձ, ով հայտարարել, ազդարարել է որևէ բան: Վաղ միջնադարում այն լայն կիրառություն է ունեցել:

Զարգացման հետագա փուլերում «քարոզ»-ը ստանում է իրանիշ գոյականի իմաստ: Քարոզի միջոցով փոխանցվում են կրոնադավանաբանական ճշմարտություններ, աստվածաշնչյան պատգամներ, բարոյախրատական ուսուցումներ: Հաճախ կարող է միաժամանակ օգտագործվել ճառ, խրատ, գանձ բառերի հետ: Կան մատենագրական միավորներ, որոնք անվանվում են քարոզ, որոնք կառուցվածքային հստակ ձև ունեն, և քարոզողը կամ քարոզ կազմողը պարտավոր է պահպանել դրա ենթամիավորների հերթագայությունը:

Հայ մատենագրության մեջ կիրառվում են «քարոզ» արմատով կազմված բազմաթիվ բարդ բառեր, որոնք հայերենին ճոխություն և հարստություն պարգևելուց զատ՝ կրում են նոր լեզվամտածողության կնիքը:

Միսական ժողովածուներում գործածված «քարոզ»/«քարոզել» բառի տարբեր իմաստները չիմանալու դեպքում հնարավոր են սխալ ընկալումներ կամ թյուրըմբռնումներ:

«Քարոզ» արմատով կազմված «քարոզակ» բառի հոմանիշներ են համարվում գաւազան, վարոց, բարսմունք, ցուպ և այլ բառեր, որոնք գործածության տարբեր ոլորտ և իմաստային նրբերանգներ ունեն:

Աստվածաշնչում միևնույն նախադասության մեջ գործածված «քարոզ» և «քարոզ կարգալ» բառերի հոլնարեն տարբերակների փոխարեն թարգմանիչները հաճախ նախընտրել են օգտագործել միայն «քարոզ կարգալ» հարադիր բայը՝ դրանում միավորելով ենթական ու ստորոգրյալը:

ELYA SARIBEKYAN

K'AROSZ (SERMON) AND RELATED WORDS

Keywords: K'aroz (“herald”, “sermon”), k'arozak (ֆարոզակ, “preacher”), staff (զաւազան), origin of the word, char (հաւ, homily), khrat (խրատ), gandz (գանձ, “spiritual poem/song”), “liturgical book”, Armenian Book of Canons, “rod” (բարսմունք, barsmunk', “staff”), awetak'aroz (աւետաւֆարոզ, “evangelical sermon”).

This article outlines the semantic changes that the word *k'aroz* (քարոզ, sermon) has undergone in the course of centuries, exploring its various manifestations and use in medieval Armenian literature. The study reveals that the term *k'aroz* originally signified a person who served as an announcer, musician, herald or messenger, particularly in the context of early translations and indigenous literature. During the early medieval period, it was used extensively.

Subsequently, the word *k'aroz* acquired the meaning of a simple noun and began to be used in literature to denote a dogmatic theological interpretation or explanation. In this sense, it frequently occurs alongside terms such as *char* (հաւ, “homily”), *khrat* (խրատ, “admonition”) and *gandz* (գանձ, “hymn”). There are separate treatises entitled *k'aroz* with a clearly defined structure, to which the homilist or author is expected to adhere.

There are many compound words in Armenian that are derived from *k'aroz*, and these words enrich the language while reflecting evolving linguistic thought. A lack of awareness of the various meanings of the word *k'aroz* (ֆարոզ, “sermon”), as recorded in liturgical books, can lead to misinterpretations, since in one case it refers to the deacon's prayer-blessing, in another—a sermon delivered from the altar during the Divine Liturgy, and in canonical texts the term also appears in the sense of a “leader”.

The derivative *k'arozak* (ֆարոզակ, “preacher”), a *nomen agentis* formed from the verb քարոզել, means “preacher.” It also donates an object, namely a rod which has diverse contextual usage and semantic nuances.

When translating the Bible, if both κηρύξ and κηρύσσω appear in the same sentence, translators often opted for the compound verb *k'aroz kardal* (քարոզ կարդալ synonymous to the verb քարոզել), combining the subject and predicate into a single expression.

ЭЛЯ САРИБЕКЯН

Կ՝ԱՐՕԶ (ПРОПОВЕДЬ) И НЕКОТОРЫЕ ПРОИЗВОДНЫЕ ОТ НЕГО СЛОВА

Ключевые слова: Կ՝արօզ (furnq, «глашатай», «проповедь»), Կ՝արօզակ (furnqul, «проповедник», «жезл»), Կ՝ար (bun, «речь»)/«проповедь»), Խրատ (furun, «поучение», «наставление»), Գանձ (qun, «духовная поэма»/«песнь»); ритуальные книги, «Армянская книга канонов», Բարսմունկ՝ (purnunif, «жезл», «посох»), Բարսմունկ՝ (purnunif, «благовестие»).

В статье представлены и охарактеризованы семантические изменения, которые претерпело слово «րարն» на протяжении веков, равно как и различные формы его употребления и примеры применения в армянской книжности. Показано, что в ранней переводной и оригинальной армянской литературе термин «furnq» воспринимался преимущественно в своем первичном смысле — лицо, провозглашающее, возвещающее, музыкально исполняющее текст, т. е. глашатай. В период раннего средневековья это слово имело широкое распространение.

На следующих этапах семантической эволюции слово «furnq» приобрело абстрактное значение и стало употребляться как обозначение богословского поучения. В этом контексте оно нередко функционирует параллельно с такими словами, как «bun» (речь, проповедь), «furun» (поучение, наставление), «qun» (духовное стихотворение, песнь). Имеются текстовые единицы, озаглавленные как «furnqun» (проповеди), обладающие четкой *структурой*, которую проповедник или автор должен строго соблюдать, следуя определенной последовательности составных частей.

В средневековой армянской литературе встречается также множество сложных слов, содержащих корень «րարն», которые не только свидетельствуют о богатстве языка, но и отражают особенности нового языкового мышления.

Неосведомлённость относительно различных значений слова «furnq», зафиксированных в литургических сборниках, может привести к ошибкам интерпретации, поскольку в одном случае речь идет о молитвенном благопожелании, произносимом дьяконом, в другом — о проповеднической речи, произносимой с алтаря во время Божественной литургии, а в церковных канонах этот термин встречается и в значении «глава».

Производное от глагола «րարն» слово «furnqul», представляющее собой *nomen agentis*, означает «проповедник». Наряду с этим «րարն»

обозначает предмет, а именно «жезл», демонстрируя разнообразие сфер употребления и смысловых оттенков.

В армянском переводе Библии, в тех случаях, когда в одном и том же предложении греческого оригинала встречаются слова κήρυξ («вестник», «проповедник») и κηρύσσω («возглашать», «читать проповедь»), переводчики зачастую отдавали предпочтение составному глаголу «*բարոզ կարդալ*» (синонимичному глаголу *բարոզել*).